

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը՝** Վահե Գրիգորյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ Միջուկային Անվտանգության Կարգավորման Կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի տեղակալ
3. **Գործուղման վայրը/ ժամկետը՝** Հելսինկի, Ֆինլանդիա, 2023թ. ապրիլի 5-7
4. **Հրավիրող կողմը՝** Արևմտյան Եվրոպայի միջուկային անվտանգության կարգավորող մարմինների ասոցացիա (այսուհետ՝ WENRA)
5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Եվրոպայի միջուկային անվտանգության կարգավորող մարմինների ասոցացիայի 2023 թվականի գարնանային սեսիայի աշխատանքներին
6. **Քննարկված թեմաները՝** Հանդիպման ընթացքում քննարկվել է մասնակից երկրներում միջուկային անվտանգության և ճառագայթային պաշտպանության առկա խնդիրները և մարտահրավերները, WENRA աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների արդյունքները:
7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝**

Հանդիպման ընթացքում ներկայացվեց Փոքր մոդուլյար ռեակտորների (ՓՄՌ) և Առաջադեմ մոդուլյար ռեակտորների (ԱՄՌ) նախագծերի դիտարկման փորձը և քննարկվեցին դիտարկման և վերլուծման ընթացքում ծագող խնդիրները: WENRA կողմից այս ուղղությամբ ընդունվեց հայտարարություն՝ Հավելված 1:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց Ուկրաինայում ընթացիկ վիճակը, մասնավորապես ԶԱԷԿ շուրջ ծագած խնդիրները, որոշվեց, որ IRSN (Ֆրանսիայի կարգավորող մարմնի գիտատեխնիկական կենտրոնը) կվերանայի իր կողմից նախկինում արված ճառագայթային արտանետումների հաշվարկները:

Ներկայացվեց Անգլիայի, Հոլանդիայի և Բելգիայի կարգավորող մարմինների փորձը նոր կադրերի ընդունման և վերապատրաստման ուղղությամբ, որոշվեց ստեղծել «մեկանգամյա» աշխատանքային խումբ ցանկացող երկրների կարգավորող մարմինների անձնակազմի կառավարման աշխատակիցներից, որոնք ի հայտ կբերեն նման խնդիրները և կներկայացնեն առաջարկություններ:

Ֆրանսիայի կարգավորող մարմնի կողմից ներկայացվեց ֆրանսիական կայաններում հայտնաբերված ստրեսս-կոռոզիոն երևույթների պատճառների հայտնաբերման ուղղությամբ իրականացված աշխատանքները: Որոշվեց կազմել «մեկանգամյա» աշխատանքային խումբ ցանկացող երկրների կարգավորող մարմինների համապատասխան մասնագետներից, որոնք կիրականացնեն այս ուղղությամբ փորձի փոխանակում և կներկայացնեն իրենց վերլուծության արդյունքները:

WENRA-ի 3 աշխատանքային խմբերի կողմից ներկայացվեցին իրենց խմբերում իրականացված աշխատանքների ընթացքը և արդյունքները: Ռեակտորների հարմոնիզացիայի աշխատանքային խմբի (RHWG) կողմից ներկայացվեց մասնակից երկրներում WENRA անվտանգության ուղղորդիչ մակարդակների պահանջների ներդրման վերլուծության ընթացքը և նշվեց որ շուտով հաշվետվությունը պատրաստ կլինի, ներկայացվեց WENRA անվտանգության ուղղորդիչ մակարդակների պահանջների հիման վրա կազմվող տվյալների բազան, խմբի կողմից պլանավորվում է կազմել տերմինների բառարան:

Դիտարկվեց WENRA-ին Թուրքիայի անդամակցության հարցը, նշվեց, որ Թուրքիայի միջուկային անվտանգության կարգավորող մարմնի կողմից հայտնվել է միանալ WENRA-ին, սակայն դեռևս Թուրքիայի արտգործնախարարության կողմից դիտարկվում է նպատակահարմարության հարցը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման արդյունքում, վերոնշյալ քննարկման թեմաների և որոշումների հիման վրա կազմվեց որոշումների և միջոցառումների ցանկ, որը ներկայացվում է Հավելված 2:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվում է ներգրավվել ռեակտորների հարմոնիզացիայի աշխատանքային խմբին և մասնակցել խմբի աշխատանքներին և հանդիպումներին: Քննարկել ՄՌԱԳԿ ներկայացուցչի մասնակցության նպատակահարմարությունը Շահագործումից հանման և թափոնների աշխատանքային խմբին:

Առաջարկվում է միանալ նաև ստրեսս-կորոզիոն երևույթների ուսումնասիրման «մեկանգամյա» աշխատանքային խմբին:

Մասնակցել Եվրոպայի միջուկային անվտանգության կարգավորող մարմինների ասոցացիա 2023 թվականի աշնանային սեսիայի աշխատանքներին

Վահե Գրիգորյան
11.04.2023